

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԵՐ - ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ՝ LES LIVRES DU JOUR - RECENSIONS

«ՀԱՅ ԳԻՐՔԸ 1512-1800 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ»

Երեւան, 1988 թ.

Երեսուն տարուայ տքնածան աշխատանքներից յետոյ, անցեալ տարի՝ 1988 թուին եւ աւելի քան երկու տարուայ տպագրական ճիգերից յետոյ, վերջապէս լոյս տեսաւ «Հայ Գիրքը 1512-1800 թուականներին», հայ գրքի մատենագիտութեան Ա. շատ կարեւոր ու արժէքաւոր հաստոր, խմբագրութեամբ Խափայէլ իշխաննեանի եւ աշխատութեամբ Մեասնիկեանի անուան Հանապետական Գրադարանի հնատիպ գրքի մատենագիտական բաժնի, աշխատութեամբ՝ նինէլ Ոսկանեանի, Քնարիկ Կորկոտեանի եւ Անթառամ Սաւաեանի, հաստարակութեամբ՝ նոյն Հանրային Գրադարանի:

Նախքան այս մեծասիր զգեցին ու իր բովանդակութեան անդրադառնալը, ասենք որ այս աշխատութիւնը հայ գրական-բանասիրական բնագաւառում մի բացառիկ եւ անզուգական հրատարակութիւնն է, քանի որ դա իր մէջ ընդգրկում է շուրջ երեք դարուայ ընթացքում, եւ այն էլ մուտք ու խաւար լրջաններից՝ 1512 թուից սկսած մինչեւ 1800 թուականները, հայերէն լեզուով լրյու տեսած բոլոր գրքերի մատենագիտական ցանկը, գրքերի բովանդակութիւնն ու նկարագրութիւնը, մատենագիտական աղբիւրները եւ անգամ դրանց որտեղ ու ում մօտ լինելը, ամբողջ աշխարհի տարածքի վրայ, ի հարկ է ըստ հնարաւորին: Ահա թէ ինչու մենք դրան բացառիկ եւ անզուգական կոչեցինք:

Այս հաստորի կազմութիւնից շատ առաջ, գեռեւս 1958 թուից, աշխատանքներն սկսելով, նախ 1963 թուին տպագրուել է այս գրքին նախորդող համառօտ մի ցուցակ, բաղկացած աւելի քան 300 էջից, որի վրայ մի քանի տասնեակ տարի ուսումնասիրութիւն կատարելուց, թերինները լրացնելուց եւ տքնածան աշխատանքով նոր երեւան եկած գրքերը աւելացնելով, հազիր է հնարաւոր եղել տպագրութիւնը աւարտել 1988 թուին, ճշշտ երեսուն տարուայ գժուարին ճիգերից յետոյ:

Այս հաստորին յաջորդելու են այլ հաստորներ, որոնցից երկրորդը՝ 1801-1850 թուականինը՝ համառօտ մատենագիտութեամբ, արդէն լոյս է տեսել 1987 թուին, Հայկ Դավթեանի աշխատութեամբ, որը դարձեալ սրա առաջին հրատարակուածի նման պէտք է լրացուի ու ամբողջացնի եւ լոյս տեսնի աւելի մեծ հաստորով¹, ու այդպէս մինչեւ ներկայ ժամանակները:

Գիրքը, ինչպէս ասուեց, կազմուել է Մեասնիկեանի անուան պետական հանրային գրադարանի հայ հնատիպ գրքի մատենագիտական բաժնի կողմից, գլխաւորութեամբ նինէլ Ոսկանեանի: Գիրքը ~~առնելու համար հորհորային լիրութեան մէջ եղած~~ համար հորհորային լիրութեան մէջ եղած

1. Այդ նպատակով արդէն իսկ ուղարկուել է Ն. Զ. վանքի գրադարանի 1801-1850 թուականների գրքերի ցանկը, իսկ որպէս լրացում 1870 թուի «Սիոն»ի մէջ տպագրուել է մի յօդուած:

Նինէլ Թականեամբ: Գիրքը ամբողջացնելու համար Խորհրդային Միութեան մէջ եղած գրադարաններից բացի, օգտուել են նաև Սփիւրքի հայ եւ օտար բազմաթիւ գրադարաններից, անհատական հաաքածոններից, անգամ յատուկ առաքելութեամբ անհրաժեշտ պրատումներն ու ուսումնասիրութիւններն են կատարուել մի շարք երկների գրադարաններում:

Գիրքը բաղկացած է LII + 865 մեծածաւալ երկսիւնակ էջերից: Ակզրում որպէս գեղեցիկ խորհրդանիշ, ունի Յակոր Մեծապարտի՝ հայ առաջին տպագրիչի պատկերը, որի համար էլ գիրքը նույիրուել հայ տպագրութեան 476ամեակին Առաջարան կրում է «Հայ հնատիա գիրքը եւ նրա մատուեագիտութիւնը», որը գրի է առել Նինէլ Ոսկանեանը (էջ VII-XLV), ունի նաև դրա ամփոփումը ուսուերէն եւ անգերէն լեզուներով՝ (էջ XXVI-XLI), ապա «Յապաւումներ» եւ հասառուագրութիւններ», անուններից ցանկը (էջ XLII-LI) եւ «Պայմանական նշաններ» (էջ LII):

Գրքի էջ 795ը, հայերէն լեզուով տպագրուած գրքերի մատենագիտական ցանկն է, որ սկսուելով 16րդ դարի սկիզբներից՝ 1512 թուից, շարունակում է մինչեւ 1800 թուականը: Այդուեց բերուած են նաև հայերէն այրուքն կամ հատուածներ պարունակող, օտար գրքերը, անթուակիր գրքերը եւ «Լրացում» ները:

Վերջում ունի «Անձնանունների ցանկ», իորագրերի, տպագրութեան վայրերի, տպարանների եւ այլ անհրաժեշտ ցանկեր, ինչպէս եւ որոշ գրքերի էջերի կամ անուանաթիրթերի լուսանկարները:

Անցեալում՝ սկսեալ՝ 1963 թուից, երբ լոյս տեսաւ այս գրքի համառօտ մատենագիտական ցուցակը, մենք չուրց տասը տարի, դրան մեր «Աւետարան»ը դարձնելով, ոչ միայն շարունակ ուսումնասիրեցինք, ու զբաղուցինք զրանով, այլ կատարուած նոր յայսնաբերուածների մասին, ինչպէս եւ այլոց մօտ եղած հնատիպ գրքերի մասին, շարունակարար անհրաժեշտ տեղեկութիւնները Հաղորդեցինք այդ բաժնի աշխատողներին, ապա դրանց արդիւնքն ու նոր գտնուած գրքերի ցանկը տպագրեցինք «Հասկ» ամսագրի մէջ (1970 թ. թիւ 9-10, էջ 376-386):

Այժմ եւս երբ հիմնական գերքն է մեր ձեռքը հասել², անհրաժեշտ ենք գտնում կրկին մեր խօսքն ասելու:

Այս գրքի նախնական աշխատանքները, ինչպէս ասինք, սկսուել են 1958 թուից եւ հետեւղական ու մեծ ճիզերով, շարունակուել մինչեւ 1988 թիւը, ուղիղ երեսուն տարի:

Դրա մէջ նկարագրուած են 1154 անուն գիրք, որոնցից 789ը՝ ականատեսի, 225ը՝ լուսապատճենների, իսկ 140ը՝ մատենագիտական աղբիւրների վրայից: Նման որեւէ մանրամասնութեան բովանդակութեամբ գրքը, լոյս տեսնելուց յետոյ իսկ, չեն զադարում դրանց մէջ եղած թիրները լրացնելու կամ նոր պրատումները, մի բան եւս կարողանալ աւելացնելու համար դրանց վրայ:

Արդեօ՞ք հնարաւոր է այդ շտեսած 140 գրքերից գտնել ոմանք, եւ կամ կարելի է միանգամայն նորերն եւս ձեռք բերել: Ահա մի հարց, որ հետաքրքրում է բոլոր հայ գրասէրներին, գրքով հետաքրքրուողներին եւ առաւելաբար բանաէրներին ու գիրքը կազմողներին:

Նկարագրուած իւրաքանչիւր գրքի համար, տրուած է տիտղոսաթերթի գրութիւնը, գրքի ծաւալն ու էջերի քանակը, բովանդակութիւնը՝ մանրամասն նիւթերով, գրքի մասին եղած գրականութիւնը, գրքի վիճակը եւ որտեղ ու ում մօտ (գրադարանում կամ անհատի) գտնուելը:

2. 1988 թուին, մեր երեւան գտնուած օրերին, գրքի տպագրուած նախնական օրինակը տեսանք, բայց այլուհանդեր տպագրութիւնը իր լրումին է հասել միայն 1988 թուին:

Այս գրքում պարզուել ու նշգրտուել են մեծ թուղթ գրքերի տպագրութեան վայրերն ու թուականները, որոնք անցեալում անորոշ էին մնացել կամ սխալ ձեռով էին մտել մեր գրականութեան մէջ:

Գրքում բերուել են նաև օտարլեզուեան այն գրքերը, որոնց մէջ կայ Հայերէն Այրութեն տպուած 16րդ դարում, կամ հատուածներ Հայերէն լեզուով: Այդուել բերուել է նաև Հայերէն լեզուով տպագրուած քարտէզները, որոնցից առաջինը տպագրուել է 1805 թուին Ամսդերտամում, «Համալրած աշխարհացոյց» խորագրով, որից Սր. Ամենափրկիչ վանքում՝ թանգարանում եւ գրադարան-մատենադարանում կայ մէկական օրինակ:

Հայերէն ներկային առաջին համարուող «Ռուրաբագիրք» ից, տպուած 1512 թուին եւ երկրորդ համարուող «Պատարագատետր» ից, տպուած 1513 թուին, նոր Զուղայի վանքում կայ մէկական օրինակ:

Գրքի մէջ այս բոլոր գրական կողմերի հետ, յատկապէս նման ծաւալուն աշխատանքներում, բնականաբար եւ կամքից անկախ պատճառներով, կը լինեն նաև որոշ թերիններ, սիամիններ ու բացիպումներ, որոնցից ոմանք շատ յաճախ նկատուած են գրքի տպագրութեան ժամանակ եւ ճշտուած վրիպակներով, գրքի հեղինակի կամ կազմողների կողմից: Այդպէս էլ այստեղ սպրել են որոշ սիամներ, որ ստորեւ տալիս ենք նկատուածները:

Վերջում բերում ենք նաև մի քանի նոր ձեռք բերուած գրքերի անունները միայն, լրիւ մատենագիտական ցանկը թողնելով մի այլ առիթով ներկայացնելու:

Յիշենք նաև, որ գրքի մէջ բերուած անունների մէջ շուրջ յիսուն անուն կայ պարսկայերից, լինի դա եկեղեցի, ակումբ, գրադարան կամ անհատ, Թագիղից, Թեհրանից, Փերիայից եւ նոր Զուղայից, որոնք հնատիպ գրքեր են ունեցել կամ այդ առթիւ մամուկում յօդուածներ են գրել: Ստորեւ մեր նկատուած թերինները.

1. էջ՝ XLIII – Բ. «Ա» Պողաբեան նորայր – անունը նոյն էջում, բերուել է երկու անգամ, նոյն բովանդակութեամբ:

2. էջ՝ XLV – «Էջմիածին» ամսագրի 1866 թ. համար 7ում Խափայէլ հշանեանի «Նոր Ալիքը հայ հին տպագրութեան պատմութեան վերաբերեալ» յօդուածի խորագրի մէջ, մոռացուած է «Հայ» բառը:

3. էջ՝ XLV – «Թ. Հ.» Թեհրանի Հայ Ակումբի Գրադում սխալմամբ բերուել է «Թիֆլիս» բառը, որ վերի տողի մէջ եղածի կրկնութիւնն է:

4. էջ՝ XLVI – «Գրական թերթ» ում Կորկուտեան Քնարիկի եւ Ուսկանեան նինէլի գրած «Նոր Զուղայի տպարամել» յօդուած, որ գրուել է լոյս է տեսել 1976 թուի 30 Ցունուարին, պէտք է լինի 1970 թ. 30 թունուար:

5. էջ՝ 1-3 – «Երկու խօսի հայերէն առաջին տպագիր գրիերի մասին» «Հասկա» ում եղած յօդուածից բացի, տպագրուել է նաև «Լրաբեր Հասարակական գիտութիւնների» 1968 թ. Սայիսի համարում, (էջ՝ 113-114):

6. էջ՝ 22 – Համար 30 գրքի՝ նոր Զուղայում տպագրուած «Սալմոս»ի առթիւ յիշուած է, որ գրանից կայ նաև Երուսալէմի վանքի գրադարանում, որ վստահաբար ճիշտ լինել չի կարող, քանի որ այդ գրադարանի հնատիպ գրքերի մատենագիտական ցանկի մէջ՝ 1512-1800 թուականների, որ Արա Գալայճեանի աշխատութեամբ լոյս տեսաւ նախ «Սիոն»ի մէջ (1987-1972 թ.), ապա տպագրուեց առանձին հատորով, ոչ մէկի մէջ յիշուած չէ, որ ունեն իրենք: 1838 թուի «Սալմոս»ի մի լրիւ լուսապատճէնը, այժմ գտնուած է Ն. Զ. վանքի թանգարանում:

7. էջ՝ 40 – 1862 թուին տպագրուած «Այրութենարան»ի մասին, «Հասկա»ի 1970 թուի յօդուածից (էջ 377) բացի, մի առանձին յօդուած կայ նաև «Սիոն»ի մէջ (1970 թ. Սեպտ.-Հոկտ., էջ 445-446):

8. էջ՝ 116 – Համար 156 «Համատարած աշխարհացոյց»ի նկարագրութեան մէջ՝ «Անուանացոյց»ի գրութեան վերջում եղած «Գ»ն աւելորդ է: Այս քարտէզից Ն. Զ. վանքում կայ երկու օրինակ, որոնց մասին յիշուած չէ, մի յօդուած կայ անգլերէն լեզուով նաև «IMAGO MUNDI»ի 1967 թուի համար ԽIի-էջ՝ 113–114ում, գրուած C. KOEMANի կողմից:

9. էջ՝ 138 – Համար 186 գրքի նկարագրութեան վերջում եղած ՆԶԱԳԼԸ տառերի վերջին «Լե»ն աւելորդ է, պէտք է լինի ՆԶԱԳ: Այս գրքի մասին «Դպրութեան գիրք եւ տաղարամ» գրուած է նաև 1970 թուի «Հասակ»ի մէջ, որ յիշուած չէ:

10. էջ՝ 313 – Համար 399ի «Աստուածաշունչ»ի նկարագրութեան վերջում, ծանօթութեան մէջ, յիշուած է, «Վիեննայի Միհիթարեանների մատենադարանում պահ- ւում է Նկարների մի ալբում (թիւ. Ժ 1404), որի մէջ Հաւաքուած են Աստուածաշունչի այս հրատարակութեան (1733 թուի – Լ. Մ.) պատկերները, (առանց բնագրի): Ալբումը բաղկացած է 157 թերթերից, որոնց վրայ կան տարբեր չափերի պատկերներ՝ մակա- գրութիւններով...»:

Մեզ թուում է որ այս «Ալբում»ը առանձին մի հրատարակութիւն է, որ կատարուել է նյոյն Աստուածաշունչի մետաղապատկերների վրայից, որի մէկ օրինակը, մէկ թերթ սկզբից եւ մի քանի թերթ վերջից պակասաւոր, գտնուում է մեզ մօտ: Այդ առթիւ մի առանձին յօդուած ունենեց տպագրուած «Շիրակ» ամսագրի մէջ (Բէյրութ, 1974 թ., Յու- նիս, էջ 60–61), «Հայերէն առաջին պատկերագիրքը» նորագրով: Այս մասին յիշուած է նաև «Հասակ»ի մէջ (1970 թ., էջ 383–384), ինչպէս եւ Հայր Սահակ ձեմքնեանի «Միհիթար Արքահօր հրատարակչական առաքելութիւմը» գրքի մէջ (Վենետիկ, 1980 թ., էջ 120–121):

Մեր ունեցած օրինակի պատկերները, բացի մէկից, միւսները բոլորն էլ միահա- ւասար են (7,5 × 11 ս.մ.) տպագրուած թերթի միայն մէկ էջի վրայ, որոնց բոլորի ներքեւում տպագրուած են անհրաժեշտ բացատրութիւնները:

11. էջ՝ 324, թիւ 414 «Գիրք աղօրից» գրքի չափը նշուած չէ, գրքից կայ Վենե- տիկի Միհիթարեան Միհարանութեան գրադարանում եւ նրեանի Սաշտոցի անուան մատենադարանում:

12. էջ՝ 465 – Համար 614 Պաղտասար դպիրի «Տաղարամիկ»ի մասին 1963 թուի հնատիփ գրքի նախնական ցուցակում յիշուած էր որ մի քանի երգերի Համար գրուած է «Թ. Վ.» տառերը, որոնք չէին պարզել թէ ումն է վերաբերում: Այս առթիւ մենք յիշել ենք «Հասակ»ի յօդուածում (էջ 385), մինչ այս մասին ներկայ հատորում որեւէ յիշատակութիւն չկայ թէ ով է այդ «Թ. Վ.»ն:

Նախ ասենք, որ նկատի ունենալով որ այդ երեք երգարանները առանձին էջա- կալութիւն, ցանկ ու տիտղոսաթերթ ունեն (բացառութեամբ Վերջինի), ուստի պէտք է առանձին հրատարակութիւններ համարել. իսկ «Թ. Վ.» որի երգերը կան երգարանի երգ 48–53ի մէջ, պէտք է կարդալ Թադէոս կամ Թովման վարդապետ:

13. էջ՝ 489 – Համար 646 գրքի՝ Յակոպ Շամիրեանի (ոչ՝ Շահամիրեանի – Լ. Մ.) «Ալյորենարամ»ի մասին, խօսք կայ նաև Յ. Իրազեկի «Պատմութիւն Խնդիրական տպա- գրութեան» գրքի մէջ (Անդրլիսս, 1988 թ., էջ՝ 53), իսկ որեւէ յիշատակում չկայ Շմաւանեանի «Ալյորենարամ»ի մասին: Նկատի ունենալով որ վերջինիս տպագրած «Ալյորենարամ»ն եւս վերջում ունեցել է «Սաղմոս», Հաւանական է թուում որ մէկը դարձել է երկու եւ վերագրուել Շամիրեանին, եւ հէնց այդ նկատառումով էլ տպա- գրական թուականը ի մտի ունենալով այս վերագրել ենք Շամիրեանին («Հասակ» 1970 թ., թիւ. 9–10, էջ 383–384):

Ցիշենք նաև, որ էջ 489ի յղումը՝ «տես թիւ 985ի նկարագրութիւնը» ճիշտ չէ, պէտք է լինի 995:

14. Էջ՝ 728, համար 952 գրքի նկարագրութեան մէջ յիշուած «Տէր Սամուէլ Փիլապոսեան թիֆլոցեցն»ն անձնանունների ցանկում (էջ՝ 835), զարձել է «Սամուէլ Յարովիւն Շմաւոնեան Շիրազեցի սրբագրիչ», որը ճիշտ չէ եւ անունների շփոթութիւն է եղել:

15. Էջ՝ 852ի «Սաղմոս Դաւթի որ կոչի Սաղմոսարան»ի դիմաց գրուած թուերի վերին համարը՝ 1046, աւելորդ է, որը պատկանում է դրանից վերեւ գրուած «Պօղոսի թուղթք»ին:

Այլ դիտողութիւններ.

ա. Որոշ օրացոյնների չափերը նշուած չեն, թէեւ դրանից ոմանք լրիւ չեն ունեցել ձեռքի տակ, բայց մի քանի էջ լուսապատճէնի վրայից իսկ հնարաւոր էր շարուածքի չափը նշել:

բ. Լաւ կը լինէր, եթէ միօրինակութիւն պահպանելու համար, իւրաքանչիւր տարուայ տպագրուած գրքերն եւս այբբենական հերթականութեամբ դասաւորուած լինէր:

գ. Նոր Զուղայում 1841 թուին տպագրուած «Նոր Հրդատեսրժից վանքի թանգարանում կայ 6 թիրթ:

դ. 1780 թուի Վենետիկում տպագրուած օրացոյցից (էջ 518, համար 694) վանքի թիւ 2358 «Նարակնոցի կազմերի ներսի կողմում փակցրուած է չորս թիրթ:

բ. Գրքում մի օրինակութիւն պահպանելու համար, լաւ կը լինէր որ նախ գրուէր գրքերի խորազգերը եւ ապա հեղինակները, քանի որ շատ գրքեր հեղինակ չունեն, ուստի սկզբում մէկինը հեղինակի անունն է, միւսինը՝ խորազգերը:

զ. Որոշ գրքերի համար մամուկում եղած գրութիւնները նշուած չեն, ինչպէս 1725 թուի Հմայիլ (էջ՝ 286, համար 353), որի մասին յիշուած է «Հասկ»ի յօդուածում (1970 թ., էջ 380-81):

Գրքում երկու տեղ բերուած են այս անհատների անունները, որոնք իրենց լուման են մուծել այդ հսկայ աշխատանքի մէջ, իւրաքանչիւրը մէկ երկու աղիս աւելացնելով դրա կառուցումին ի նպատակ:

Գրքի մէջ շատ ցայտուն ձեռվ երեւում է Զուղայի եւ Զուղայեցիների բերած նպաստը հայ տպագրութեանը, դա լինի տպարաններ հիմնելով՝ նոր Զուղայում, Հնդկաստանում, Երոպայում եւ Բնուաստանում, կամ մեկնաս հանդիսանալով:

Զուղայում տպագրուած նոր գտնուած գրքերից հետաքրիտ է յիշել Տաթեւացու «Գիրք հարցմանցը» տպուած 1887 (?) թուին, (էջ՝ 786, համար 1078), որ մինչեւ այժմ ծանօթ չի եղել:

Գրքում յիշուած չեն հետեւեալ գրքերը, որոնց միայն անուններն ենք բերում, մատենագրտական ցանկը թողնելով այլ առիթով տալու:

1. «Սաղմոս ի Դաւթի» տպուած 1694 թուին, որից մէկ օրինակ կայ Բրիտանական թանգարանում (Բ. Գ. 17021 a15) («Ալիք» 1977 թ. 15 նոյ.):

2. «Գիրք աղօթից» որ տպուել է Ն. Զուղայում 1888 թուին («Ալիք» 1977, թ. 15 նոյ.):

3. «Սաղմոս» տպագրուած 1798 թուին, հաւանաբար Կ. Պոլսում, որն ունի 356 էջ եւ տարրեր է նոյն թուի մի այլ տպագրուածից:

Վերջացնելով մեր այս համառու անդրակարձը «Հայ գիրքը 1512-1800 թուական-ներին» խիստ արժեքաւոր աշխատութեան առթիւ, կրկին անգամ մեր ջերմ գնահատանքն ենք յայտնում, դրա բոլոր աշխատողներին եւ յատկապէս տիւ ու գիշեր իրենց ուժերն ի սպաս բերած կազմողներին, մաղթելով նոր ոյժ ու կորով պապայ աշխատների համար:

Վարձքների կ կատար: